ԿԱՐՄԻՐ ԿՈՎԻ ՄՈՏԻՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում և, մասնավորապես՝ հրաշապատում հեքիաթներում պահպանվել են երբեմնի տոտեմ-նախնու՝ կարմիր կովի պաշտամունքի հետ կապված հասկացությունների հետքեր: Ասարնե-Թոմփսոնի «Հեքիաթների տիպերի միջազգային համացույցի»[1] «Մոխրոտիկ», «Փոքրիկ կարմիր եզ», «Օգտակար կովը» խորագրերը կրող AT 510A+511A+511A թվահամարներին համապատասխանող հայկական հեքիաթների ինը փոփոխակների[2] համառոտ դիպաշարը հանգում է հետևյալին. խորթ մայրը հալածում է ամուսնու աղջկան (տարբերակներում՝ տղային, երեխաներին), նրա ուղարկում է կովը (եզը) արածեցնելու: Իլիկի ետևից գնալով՝ աղջիկն ընկնում է հորի պառավի մոտ և պատրաստակամ ու սիրալիր վերաբերմունքի դիմաց նա որբ աղջկա գլուխը պահել է տալիս սպիտակ, կարմիր կամ նարնջի ջրի տակ ու ոսկեմազիկ է դարձնում, իսկ խորթ մոր կոպիտ ու աննրբանկատ աղջկան սևացնում է, ճակատից մի կտոր միս կախում (էշի պոչ, քանթալ): Եղջյուրներից յուղ (անմահական ջուր ու մեղր) արտադրող կարմիր կովը սնում է որբ աղջկան և խորթ մոր պահանջով մորթվում: Կովի (պառավի) խորհրդով աղջիկը (երեխաները) կովի եղջյուրները, ոտքերը, սմբակները հորում է գոմում, ծծում կոտոշները և կշտանում: Խորթ մոր կողմից տրված դժվարին առաջադրանքներն աղջիկը կատարում է կովի՝ նախապես տված հանձնարարականների և պառավի օգնությամբ: Կարմիր կովի ոսկորները աղջկան պարգևում են ոսկե կոշիկներ և հարսանեկան շքեղ շորեր: Թագավորազնը կորած կոշիկի միջոցով գտնում է որբ աղջկան: Խորթ մայրն ամուսնու աղջկա փոխարեն իր տգեղ աղջկան է ներկայացնում իբրև հարսնացու, իսկ որբի*

---

[1] A. A a r n e, S. T h o m p s o n. The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's Verzeichnis der Märchentypen. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia scientiarum Fennica, p. 177-179.

[2] *«Ճշմարտությունը չի կորչի» (Այրարատ).– Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. III, Երևան, 1962, էջ 435-441 (հավելված), «Խորթ ախճրկանը հաքյաթը» (Արցախ), հ. VI, Երևան, 1973, էջ 46-49, «Կարդիկ եզան հեքիաթը» (Գուգարք-Լոռի).– ՀԺՀ, հ. VIII, Երևան, 1977, էջ 72-77, «Ոսկեմազիկը».– ՀԺՀ, հ. VIII, էջ 387-393, «Կարմիր եզն ու հուշապ» (Տուրուբերան-Մուշ).– ՀԺՀ, հ. XII, Երևան, 1984, էջ 524-539, «Բոր եզ» (Տուրուբերան-Մուշ).– ՀԺՀ, հ. XIII, Երևան, 1985, էջ 161-177, «ԹաՕնջուման Խաթուն» (Վան-Վասպուրական).– ՀԺՀ, հ. XIV, Երևան, 1999, էջ 194-205, Ե. Լ ա լ ա յ ա ն. Մարգարիտներ հայ բանահյուսության (այսուհետ՝ ԵԼՄ), գ. Գ., Թիֆլիս-Վաղարշապատ, 1914-15, էջ 252-257, «Կարմիր կովի խեքեաթը» (Գյուլափլու-Մակուեցիներ).– Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ԲԱ), Ե. Լալայանի ֆոնդ, FA IV, 0145-0160:*

գլխին մոխիր է շաղ տալիս ու մտցնում թոնիրը: Աքլորի[3] (կատվի)[4] օգնությամբ ճշմարտությունը բացահայտվում է: Մեղավորները պատժվում են:

Կովի (եզ, խոյ, այծ) եղջյուրներն իբրև ծիսական գավաթ գործածելու մասին վկայությունները և դրանց հետ կապված հավատալիքները բավական շատ են հայոց կենցաղում, բանահյուսության, դիցաբանության մեջ և հնագիտական պեղածո նյութերում[5]:

Հնագույն ժամանակներից սկսած որպես գավաթ օգտագործվող կենդանիների եղջյուրները, որ այնքան առատորեն երևան են գալիս Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, իրենց զգալի մասով կապված են երբեմնի տոտեմական հասկացությունների՝ կենաց ծառերի, հեղուկների ու նախնիների պաշտամունքի հետ[6]:

Նույն վերապրուկների վերաբերյալ կան նաև աստվածաշնչյան վկայություններ, որոնց բոլորի մեջ էլ «եղջիւր իւղոյ»-ն բացատրվում է իբրև «եղջերեաց աման իւղոյ»[7]. «Եվ Սադովկ քահանան խորանէն եղին եղջիւրը առաւ ու Սողոմոնը օծեց»[8]:

Բուսական խեժերն ու սրբազան յուղը (կաթ, մեղր, մածուն, անմահական ջուր), որ պահվում են ծիսական անոթներում, զուգամիտվում են որբ երեխաներին կերակրող կովակերպ նախամոր եղջյուրների հետ:

Վերոհիշյալ եղջերավորների հնագույն պաշտամունքը հարատևել է նաև միջնադարյան խեցեղեն հավաքածուներում[9] և խաչքարային մշակույթում[10]: Ամալթեայի (հուն.՝ այծ) եղջյուրն ունեցել է մոգական հատկություն և տալիս էր այն ամենը, ինչը փափագում էր նրա տերը[11]: Հին արևելյան և հունական շատ առասպելներում այծերը հաճախ հանդես են գալիս իբրև երկնային աստվածությունների հովանավորող ու սնուցող[12]: Միջագետքյան առասպելում ամպրոպ-կայծակի աստված Նինգիրսուի մայրը սրբազան այծն էր[13]: Այծն էր Զևսի ստնտուն Կրետե կղզում, որտեղ վերջինիս մայրը՝ Հռեան, իր մանկանը

---

[3] *ՀԺՀ, հ. XIV, էջ 204:*

[4] *ՀԺՀ, հ. VIII, էջ 76-77:*

[5] *Գեղամա և Սյունյաց լեռների ժայռապատկերներում ներկայացված են այծեր՝ եղջյուրների խոշոր շրջանակներով: Նույնը կարելի է ասել Հայաստանի տարբեր շրջաններից պեղված բրոնզե գոտիների, ինչպես նաև Ղարաբաղի Խաչբուլաղ կոչվող դամբարանադաշտից 1962 թ. հայտնաբերված բրոնզե գոտու բեկորի մասին (մ. թ. ա. XI–VIII դդ.), որոնց վրա պատկերված են այծեր, խոյեր, ցուլեր, եղջերուներ՝ իրենց խոշոր եղջյուրներով (Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 54-102):*

[6] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. № 5458, թերթ 280 բ, ձեռ. № 6733, թ. 29ա, ձեռ. № 197, թ. 90բ, ձեռ. № 4096, թ. 252 բ:*

[7] *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1979, էջ 657:*

[8] *Աստուածաշունչ. Կոստանդնուպոլիս, 1883,Գ Թագաւորաց 1:39, էջ 382:*

[9] *Ֆ. Բ ա բ ա յ ա ն. Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Երևան, 1981, էջ 33-47:*

[10] *Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 63-64:*

[11] *Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 15:*

[12] А. Л о с е в. Античная мифология. М., 1957, с. 249–253.

[13] Д. Р е д е р. Мифы и легенды древнего Двуречья. М., 1965, с. 103.

թաքցնում էր Քրոնոսից[14]: Հայ բանահյուսության մեջ՝ խաղիկներում[15] և, մասնավորապես՝ հրաշապատում հեքիաթներում[16], եղջերուն, այծը, ոչխարը կամ կովն է որը երեխաներին կերակրողն ու խնամակալը: «Թանջյուման խաթուն»[17] (Վան-Վասպուրական) հեքիաթում սոված երեխաների մայրը կերպարանափոխվում է կովի:

Վերոհիշյալ հեքիաթում հայրը դաշտից հոգնած վերադառնում է տուն և աղջկա՝ Թանջյումանի կաթնաբերդոշ ուտելու երանելի ցանկությանն ի պատասխան դժգոհում է, թե քանի որ աստված մի կով չի տվել իրենց, թող մայրը կով դառնա և իր կաթով կերակրի ընտանիքին: Հենց ամուսնու խոսքերի վրա կինն անմիջապես կերպարանափոխվում է և դառնում կարմիր կով: Հայր ու աղջիկ լալիս են, մորմոքում, իրենց գլխին տալիս, փաթաթվում են կովի վզին, բայց էլ ճար չկար, մայրը դարձել էր կով, պրծել. «Կովն էլ հանուր ախչրկան ծեռքյեր կլիզեր, հանի կարոտով-կարոտով կիրիշկեր ինոր իրես: Ըսկում էլ պեռլ կաթ կուտեր, որ խեր էնանն ախչիկ պեռլ-պեռլ ուտելուց սորա կծախին էլ»[18]:

Ե՛վ քննվող հեքիաթում, և՛ համապատասխան տարբերակներում խորթ մայրը սկսում է հալածել ամուսնու աղջկան: «Վարդիկ եզան հեքիաթում»[19] խորթ աղջիկը պարտավորվում է եզն արածեցնել, միաժամանակ իլիկով թել մանել, մի կտոր հացով կշտանալ, շանն էլ կշտացնել և երեկոյան հացը ետ բերել տուն: Եզը մարդու պես լեզու է առնում, մխիթարում լացող աղջկան. «Եզն ասում ա.– Ախչի՛, դու միտքը մի՛ անի, աստված օգորմած ա, իմ մի պոզը եղ ա, մինը մեղր ա, ուտիս օրը եղը ծծե, պաս օրը մեղրը ծծե»[20]: Արցախից գրառված «Խորթ ախճրկանը հաքյաթում»[21] խորթ մայրը նույն պայմանն է դնում. «Մին վախտ էս կնեգյը մին կուտանա, մին էլ մին գյիրվանքա պանրթ, մին էլ մին կով ա տվալ էս խորթ ախճրկանը, թա. «Ըստահանք եր կալ, քյինանի. էս կուտանան ըսօր կեր, կեր, լեհանի ինքյը տեղը. էս պանրթն էլ մանե, պեր»[22]:

---

[14] *Դիցաբանական բառարան, էջ 15:*

[15] *Մ. Աբեղյան. Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 161, Գ. Շ ե ր ե ն ց. Վանա սազ, հ. I, Թիֆլիս, 1885, էջ 83, Հ. Ճ ա ն ի կ ե ա ն. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 404, Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչալուի գավառ, Բանավոր գրականություն.– Ազգագրական հանդես, գ. XI, 1904, էջ 37, ՄՄ, ձեռագիր № 7709, թ. 124ա:*

[16] *«Ջեյրան օղլի» (Այրարատ).– ՀԺՀ, հ. I, Երևան, 1959, էջ 285-295, «Աղբեր տղա և քառասունծամ Փարի».– ՀԺՀ, հ. I, էջ 537-551 (հավելված), «Աստծու գրածը բոգուլմիշ չէղնի» (Բասեն).– ՀԺՀ, հ. IV, Երևան, 1963, էջ 374-377, «Օվ սովդաքյաՕրին հաքյաթը» (Ղարաբաղ).– ՀԺՀ, հ. VI, էջ 71-73, «Ջիգարով պախրեն» (Գուգարք-Լոռի).– ՀԺՀ, հ. VIII, էջ 398-399, «Ճակատագիր» (Խնուս).– Ռ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Թալին.– Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Երևան, 1999, էջ 63-64, «Փարի խանումի նաղլը» (Շամշադին).– Հայկական ժողովրդական հեքիաթներ, կազմեցին՝ Ն. Ա. Հակոբյան, Ա. Ս. Սահակյան, Երևանի համալսարանի հրատ. (այսուհետ՝ ՀԺՀ, ԵՀՀ), Երևան, 1980, էջ 57-70, ԲԱ, Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր № 1, 2008, թ. 21-25:*

[17] *ՀԺՀ, հ. XIV, էջ 194-205:*

[18] *Նույն տեղում, էջ 194:*

[19] *ՀԺՀ, հ. VIII, էջ 72:*

[20] *Նույն տեղում:*

[21] *ՀԺՀ, հ. VI, էջ 46-48:*

[22] *Նույն տեղում, էջ 46:*

Թեև վերոհիշյալ հեքիաթում բացակայում է եղջյուրի միջոցով կերակրելու մոտիվը, սակայն աղջկան կաթ ու մածնով սնելու հանգամանքը հուշում է, որ այն սպրդել է հեքիաթի դիպաշարից, մանավանդ որ Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառված միևնույն հեքիաթի փոփոխակները ամբողջությամբ պահպանում են որբ երեխաներին կերակրող նախամոր եղջյուրների պաշտամունքը[23]*: Ավելի ուշ շրջանի պատումներում փաստական նյութը համադրվում է AT 510B տիպի հեքիաթների հետ: Այստեղ արդեն աղջիկը սնվում է ոչ թե կովի կոտոշներից, այլ՝ ձիերի կերաբաժնից*[24] *(նուշ ու քիշմիշ):*

Տեսնելով, որ հյուծվելու փոխարեն ամուսնու աղջիկն ավելի է սիրունացել ու ոսկեմազիկ դարձել, խորթ մայրը որոշում է իր աղջկան էլ հանդ ուղարկել. «Էն քշերը եղնամերը իրան ախչկա հմա գաթա ա թխում ու նազուկ, ձու ա եփում ու ռավոտը հետը դնում ա, որ եզը տանի արածացնի»[25]*:*

Վարդիկ եզը աղջկա շորերից հոտ է առնում՝ համոզվելու, թե արդյոք բարի՞ աղջիկն է, որպեսզի իր պոզերից եկող յուղ ու մեղրով կերակրի: Աղջիկը խփելով քշում է նրան: Նույն կերպ նա կոպտում է քարայրի պառավին: Պառավը նրա գլուխը պահել է տալիս սև ջրի տակ: Չար աղջիկն ավելի է տգեղանում, և էշի պոչն էլ կախ է ընկնում ճակատից:

«Խորթ ախճրկանը հաքյաթում»[26] *կովը ոչ միայն աղջկան կաթ ու մածուն է տալիս, այլև ինքն է աղջկա փոխարեն բուրդ գզում. «Էս կովս պռ. րթին ճոնդը քիցքել ա ըռեխը, մին ճոնդն էլ ըռաչի վըոննին, մին ճոնդան մանալ, թիլն էլ ճոնդան ռռավը տռ. ս ա եկալ, էս ախճիգյս էլ կծկալ ա»*[27]*:*

*Ռուսական «*Крошечка Хаврошечка*»*[28] *«Պստլիկ Խավրոշեչկան» հեքիաթում կովն է որբ աղջկա փոխարեն կատարում խորթ մոր հանձնարարականները՝ մանում, գործում, ներկում և փաթաթում վուշը: Պստլիկ Խավրոշեչկան օրոր է երգում և քնեցնում խոտերի վրա մեկնված Երեքաչքանի խորթ քրոջը, սակայն մոռանում է փակել նրա երրորդ աչքը. «Երկու աչքերը քնեցին, իսկ երրորդը մնաց արթուն ու տեսավ, թե ոնց աղջիկը կովի մի ականջից մտավ, մյուսով դուրս եկավ ու պատրաստի կտորը հավաքեց: Երեքաչքանին մորը ամեն ինչ պատմեց, սա ուրախացավ ու գնաց կպավ մարդուց.*

– Չալ կովը մորթի»[29] *(–* Режь рябую корову![30]*):*

Չալ կովը մորթվում է: Ճիշտ է, ռուսական հեքիաթում բացակայում է կովի եղջյուրով սնվելու մոտիվը, սակայն այդ նույն կովի ոսկորներից աճած խնձոր-

---

[23] *«Ամզուկ (հնց.): Ծայրին ծծուկ ամրացրած հարմարանք (սովորաբար ոչխարի եղջյուր), որի մեջ կաթ են ածում և երեխային ծծեցնում» (Է. դ. Ա ղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 33):*

[24] *«Թըլի» (Մանազկերտ).– ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 253-257:*

[25] *ՀԺՀ, հ. VIII, էջ 74:*

[26] *ՀԺՀ, հ. VI, էջ 46-48:*

[27] *Նույն տեղում:*

[28] Народные русские сказки. Из сборника А. Н. Афанасьева. М., 1991, с. 58–59.

[29] *Ռուսական ժողովրդական հեքիաթներ. թարգմ՝ Ա. Մեղրակյանի, Երևան, 1987, էջ 31-32:*

[30] Народные русские сказки, с. 58–59.

ները երջանկության ու առատության աղբյուր են դառնում որբ աղջկա համար: Կատարելով կովի պատվերը՝ Խավրոշեչկան սոված մնաց, բայց նրա մսին ձեռ չտվեց, ոսկորներն էլ ամեն օր ջրեց ու դրանից մի խնձորենի բուսնեց՝ տերևները ոսկի, ճղները արծաթ, պտուղները հյութով լիքը: Մի օր դաշտով անցնող հարուստ, գանգրահեր իշխանը ձայն տվեց աղջիկներին, թե ով առաջինը իր համար խնձոր քաղի, նրան էլ կին կառնի: «Ու երեք քույրերը վրա տվեցին, խնձորներն էլ ցածր էին, հենց ձեռքի տակ: Բայց վեր ելան ծառը՝ բարձր-բարձր, ուզեցին խնձորները թափ տալ՝ տերևները աչքների դեմը փակեցին, ուզեցին պոկոտել՝ ճյուղերը հյուսքերը քանդեցին ու ոնց էլ արին, ինչքան էլ չարչարվեցին, մենակ ձեռքերն արյունոտեցին, համա խնձոր չքաղեցին»[31]:

Երկու դեպքում էլ չար կնոջ երեխաները պատժվում են, բախտը երես է թեքում նրանցից, որը հայ ժողովրդական հեքիաթների բանաձևային վերջաբանում հիմնականում արտահայտվում է հետևյալ կերպ. խորթ մորն ու աղջկան կապում են կատաղած ձիերի կամ ջորիների պոչից ու բաց թողնում:

Գուգարք-Լոռիից գրառված «Ոսկեմազիկը»[32] հեքիաթում պատիժն ավելի շատ բարոյական բնույթ է կրում. «Նոր դրան բերըմ են հրսանիք անըմ թաքավորի տղի հետ, հասնում են իրանց մուրազին, դուն էլ հասնես քու մուրազին: Էն պլոկված խորթ մոր անսկամն էլ մնըմ ա տանը, ոնչ ուզող ա ըլըմ, ոնչ բան (վա՛յ տամ նրա էլ, իրա մոր գլխին էլ)»[33]:

Այրարատից գրառված «Ճշմարտությունը չի կորչի»[34] հեքիաթում խորթ մայրը լողացնելու պատրվակով հյուր է տանում ամուսնու աղջկան և հետամուսնական փորձությունները հաղթահարելու փուլում նրան նետում է ծովը, որտեղ աղջիկը ոսկի ձկնիկ է դառնում և մերթընդմերթ լողալով վեր է թռչում ջրի միջից ու էլի ընկղմվում ծովը: Չար կնոջ աղջիկը, որ արդեն խաբեությամբ զբաղեցրել էր իր խորթ քրոջ տեղը, սուտ հիվանդ ձևանալով՝ պահանջում և փշերով հանդերձ ուտում է ոսկի ձկանը: Սփռոցին կպած մի փոքրիկ փշից խնձորի ծառ է աճում՝ վրան երեք խնձոր: Չար աղջիկը ուտում է խնձորները, ծառը կտրել ու այրել տալիս, բայց խնձորենու՝ հեռվում աննկատելիորեն ընկած տաշեղից վերածնվում է աղջիկը և դարձյալ երջանկանում, ինչպես ռուսական հեքիաթի Խավրոշեչկան:

Հայկական հեքիաթների՝ մեզ հետաքրքրող տիպի ինը տարբերակներից երեքում խորթ մոր և իր երեխաների համար կովի միսը անհամ է, դարման, լեղի, թթու, իսկ որբ երեխաների համար՝ մեղրի պես քաղցր[35]: Խորթ մայրն ու իր աղջիկը, այդ մասին չիմանալով, միսը ամանով տալիս են որբին և ասում. «Տար, կի, բ[illegible]լքյը մեռնիս»[36]: Երեք տարբերակներում կովը, եզը կամ խնամա-

---

[31] *Ռուսական ժողովրդական հեքիաթներ, էջ 32:*
[32] *ՀԺՀ, հ. VIII, էջ 387-393:*
[33] *Նույն տեղում, էջ 393:*
[34] *ՀԺՀ, հ. III, էջ 440:*
[35] *ՀԺՀ, հ. XIV, էջ 199, ԵԼՍ, էջ 254, ԲԱ, FA IV 0145-0160:*
[36] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

կալ պառավն արգելում են կենդանու միսը ճաշակել և պահանջում են ոսկորները ուշի-ուշով ժողովել ու հորել[37], ինչպես ռուսական հեքիաթներում[38].

Երկու տարբերակներում եզը հնարամտորեն շրջանցում է չար կնոջ՝ իրեն մորթելու դիտավորությունը և չի մորթվում[39]: Եզը տղային պատվիրում է իրեն մորթելու պահին ներկա չգտնվել և խղճահարության պատրվակով հորից թույլտվություն ստանալով՝ մի կողով փոշի, այլուր, խիճ ու ավազ ցանել իր տակը: Հենց այդ փոշիով ու ավազով եզը լցնում է տղայի հոր աչքերը, պատժում թե՛ նրան, թե՛ չար կնոջն ու նրա տղային: Իսկ որբ տղային մեջքին առնելով՝ փախչում-ազատվում է:

Հայկական հեքիաթներում հովանավորյալ որբերի համար կովը ստնտու է հիմնականում իր կենդանության ժամանակ: «Կարմիր կովի խեքեաթում»[40] նրանք կովի եղջյուրներից սնվում են կենդանու մորթվելուց և ոսկորները գոմում հորելուց հետո նաև: Այդ հավատալիքի բանաձևային արձագանքը կարելի է համարել «Մեռուկ կով կաթնով կեղնի» ժողովրդական առածը: Վերոհիշյալ տարբերակում[41] որբերը, կովի խորհրդով նրա արյունը դեմքերին քսելով, ոսկեզօծվում են. «Էն կարմիր կովի էրեխեք, կարմիր կովի արնից մէկ քասով (հողէ ման) արուն վերցին, տարան խէտեր, քսին ուրանց քիթ բերան, կերպերը փոխվաւ, ծամերը, թէ սիֆաթը յէլան ոսկեզօծ»[42]: Մի տարբերակում[43] կովի ոսկորները ոսկի են դառնում, և կենդանու խորհրդով դրանք վաճառելով՝ աղջիկն ապրում է առատության մեջ: Մնացած չորս տարբերակներում կովի հորած ոսկորներն աղջկան պարգևում են շքեղ հարսանեկան շորեր և ոսկե կոշիկներ[44]:

Ուշագրավ է, որ «Պոլոտ կեով»[45] հեքիաթում պոչատ կովը կարեկցում է աղջկան, ասում է՝ իմ պոչը բռնի և իմ հետևից արի, քո գործը չէ, ես քեզ չեմ նեղացնի. «Պոլոտ կեով կըսը.- Թաշ, զիմ պոչ պռնը, հիտիվ ձի, արը»[46]: Իսկ չար կնոջ երկու աղջիկներին պոչատ կովը այնքան է չարչարում, սարեսար փախչում, որ քրտինքը նրանց ոտքերով իջնում է ցած. «Կըսին. - աշ թեռբաշ, մինքյ նա կեով չրտանինքյ, զմի սպանից նա կեով»[47]: Չար կնոջ աղջկա համար «կովի մի պոզը արին ա, մինը ժահրն ա»[48], իսկ բարի, որբ աղջկա համար հեքիաթների հինգ փոփոխակներում համապատասխանաբար՝ «երկու պոզերի մեջ՝ մեկում մեղր

---

[37] *ՀԺՀ, հ. III, էջ 437, հ. VIII, էջ 75, հ. VIII, էջ 390:*

[38] «–А ты красная девица, не ешь моего мяса, косточки мои собери, в платочек завяжи, в саду их рассади и никогда меня не забывай, каждое утро водою их поливай» (Народные русские сказки, с. 59).

[39] *ՀԺՀ, հ. XII, էջ 526, հ. XIII, էջ 164:*

[40] *ԵԼՄ, էջ 254:*

[41] *Նույն տեղում:*

[42] *Նույն տեղում:*

[43] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

[44] *ՀԺՀ, հ. III, էջ 438, հ. VIII, էջ 391, հ. XIV, էջ 200, ԵԼՄ, էջ 254:*

[45] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

[46] *Նույն տեղում:*

[47] *Նույն տեղում:*

[48] *ՀԺՀ, հ. VIII, էջ 389:*

կա, մյուսում՝ կարագ»[49]*, «մինը եղ ա դուս գձըմ, մինը մեղր»*[50]*, Վարդիկ եզան «մի պոզը եղ ա, մինը մեղր ա»*[51]*: Կարմիր եզն ու Բոր եզը իրենց կոտոշների մեղրով ու անմահական ջրով կերակրում են խորթ մոր կողմից հորը նետված տղային. «Կարմիր եզն էր, հար մըկա, էկեր մեկ հեղ զկոտոշ կիերկնցներ տղեն ծծեր»*[52] *կամ Բոր եզան «մեկ կոտոշ մեղր էր, մեկ կոտոշ անմահութենի ջուր էր»*[53]*:*

Հայոց մեջ կովի (եզ, ցուլ) և նրա եղջյուրների պաշտամունքը աղերսվում է Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների կենսապահովման մշակույթի ու երբեմնի տոտեմական հասկացությունների հետ: Վերոհիշյալ պատկերացումները լայնորեն տարածված են ոչ միայն ժողովրդական հեքիաթների, այլև ուրարտական ժամանակներից մշակված, Հայաստանի տարածքից գտնված և հիմնականում մ. թ. ա. V–IV դդ. թվագրվող գեղարվեստական մետաղի և ոսկերչական արհեստի ստեղծագործություններում, որոնց մեջ առանձնանում են եղջրագավաթները (ռիտոն-պտյակ) և որոնց ծագումը կապվում է ավելի վաղ շրջանի կավե ռիտոն-պտյակների հետ[54]*: «Պղոտ կեով»*[55] *և «Կարմիր կովի խեքեաթներում»*[56] *մորթվելուց առաջ կովը որբերին պահ է տալիս պառավին, պատվիրում հոգ տանել նրանց մասին. «Կըսը.– «Պառավ, ամանաթ նա ախչիկ, խեռեոտ շախիս»*[57] *կամ «Արէք էթանք, էստէ մէ պառաւ կայ, ես ձեզի թասմիլ կանեմ (յանձնեմ) էն պառաւին: Կարմիր կով էրեխէքին տարաւ գնաց, գնացին մէկ յէրի դուռ կայնան: Կարմիր կով էտ պառաւին կանչեց յէլաւ դուս, ասաւ. Պառաւ, դու գինա՞ս որ ընձի կը մորթեն:*

– Հա, բա, գինամ:

– Էս իմ էրեխէք կըտամ քեզի ամանաթ. Աստըծու ամանաթ, կը սիրես: Պառաւն պատասխանեց. Շատ լաւ, շատ լաւ, կարմիր կով»[58]*:*

«Ոսկեմազիկը» հեքիաթում[59]*, երբ ուզում են կովին մորթել, որբ աղջիկը լացելով գնում է պառավի մոտ. «– Դեդի ջան, կովը մորթըմ են, հիմի ի՞նչ անեմ»*[60]*: Պառավն ասում է. «Լաց մի ըլիլ ախչիկ ջան, թող արա մորթեն: Դու միցն ուտես ոչ: Հմա ով որ ուտէ՝ դու նրա դեն գձած ոսկոռնին հվաքե, տար մի տեղ*

[49] *ՀԺՀ, հ. III, էջ 435:*

[50] *ՀԺՀ, հ. VIII, էջ 388:*

[51] *Նույն տեղում, էջ 72:*

[52] *ՀԺՀ, հ. XII, էջ 524:*

[53] *ՀԺՀ, հ. XIII, էջ 161:*

[54] *Բրիտանական թանգարանի արծաթյա, մասնակի ոսկեզօծված ռիտոնը (բարձրությունը՝ 25 սմ) գտնվել է Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքի մերձակայքում* (H a n s O s t e n. Discoveries in Anatolia 1930–1931. Chicago, 1933, p. 48; O. M. D a l t o n. The Treasure of the Oxus. London, 1964, p. 42–43; Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении. Ереван, 1988, с. 19–51*): Հայկական ծագմամբ նույնատիպ եղջրագավաթներ կան նաև Փարիզի Լուվր թանգարանում (տե՛ս Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 190-192):*

[55] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

[56] *ԵԼՄ, էջ 254:*

[57] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

[58] *ԵԼՄ, էջ 254:*

[59] *ՀԺՀ, հ. VIII, էջ 387-393:*

[60] *Նույն տեղում, էջ 390:*

թաղե, հլա տես ինչքան օգուտ կանես»[61]: Ամենայն հավանականությամբ, այստեղ գործ ունենք տարբեր ժողովուրդների, նաև հայոց բանավոր ավանդության մեջ մեծ դերակատարություն ունեցած պառավի արխաիկ կերպարի հետ, որն իր կենսափորձով և գործառույթներով միջամտում է նվիրագործման խորհրդածեսի փորձությունները հաղթահարող հերոսների կյանքին՝ իբրև տիպաբանորեն նույն խմբին պատկանող արարողական կամ այլաբանական մայր, անգամ Մայր աստվածության բանահյուսական ամենավառ դրսևորում[62]:

Նույն «Ոսկեմազիկը» հեքիաթում խորթ մայրն ու աղջիկը ձեռ են առնում որբին. «Տո՛, ֆողը քու գլխին, էդ ոսկոռնին ի՞նչ տիս անիլ:

Ասըմ ա.– Չեզ մատաղ ըլիմ, ոսկոռը դեն մեք գձիլ, ինձ տվեք, տանիլ տիմ թաղիլ, էդ կովն ինձ պիեղ ա, մոր համ ա տվել:

Ինչքան դրա վրա ծիծաղըմ են, գլխին տալիս են, դա անգամ չի անըմ, հվաքըմ ա: Եփ որ չիմն էլ գիտվըմ են, տանիցը դուս են ըլըմ հովերըմը ման գալու, դա գնըմ ա դռան տակին մի ֆոր փորըմ, էդ ոսկոռնին սազով միչին շարըմ ա ու թաղըմ»[63]:

Աստվածաշնչյան թեմաներով առասպելներից մեկի համաձայն, երբ հրեշտակը հյուր է գալիս Աբրահամին, տանը ուտելու բան չի լինում, և Աբրահամը մորթելով հորթին՝ հյուրասիրում է հյուրին: Կովը երեկոյան տուն է գալիս և բառաչելով փնտրում է հորթին: Կովի ձայնն ընկնում է հյուրի ականջը: Հրեշտակը պատվիրում է Աբրահամին բերել մորթված հորթի կաշին ու ոսկորները: Աբրահամը կատարում է նրա պատվերը, միայն չի գտնում հորթի ազդոսկրը: Հրեշտակը հավաքում է հորթի կաշին ու ոսկորները, օրհնում, և հորթը կենդանացած իսկույն ոտքի է կանգնում: Քիչ անց Աբրահամը գտնում է նաև կորած ազդոսկրը և հրեշտակի պատվերով այն թաղում է այգում: Մի տարի անց հորթի ոսկորից բուսնում է խաղողի որթը[64]:

Սա ըստ բնույթի ստուգաբանական ավանդություն է, ուր, Ս. Հարությունյանի դիտարկմամբ, հայերեն հորթ և որթ նույնահունչ բառերի միջև առասպելաիմաստաբանական առումով կապ է ստեղծվել, որն արդարացվում է նաև գիտական-ստուգաբանական մակարդակում. «Տվյալ դեպքում կենդանու ձագը՝ հորթը, իբրև մատղաշ, աճող, մեծացող, պտղաբերող սերունդ, զուգամիտվել է խաղողի մատղաշ տունկին, որը պետք է աճի, մեծանա, պտղաբերի (հմմտ. հայկ. հանելուկներում խաղողի այգին կամ որթատունկն ու խաղողը, իբրև ա-

---

[61] *Նույն տեղում:*

[62] В. Н. Т о п о р о в. О некоторых особенностях хеттских ритуалов с участием SAL SU. GI связи с параллелями других традиций.– Ученые записки Тартусского Гос. Университета, вып. 201. Тарту, 1968; Е. Г. Р а б и н о в и ч. Богиня-мать.– Мифы народов мира (далее – МНМ), т. 1. М., 1987, с. 178–180. *Պառավի՝ իբրև Մայր աստվածության մասին տե՛ս Թ. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. Ծիսաառասպելական տարրերը Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում ըստ 2006-2008 թթ. գրառած նյութերի.– «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2008, № 3-4, էջ 34-35:*

[63] *ՀԺՀ, հ. VIII, էջ 390:*

[64] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, № 326, էջ 116:*

ճած ու պտղաբերած իրողությունների փոխաբերումը կովի հետ. «Մի կով ունեմ,// Տարենը մի անգամ կաթ կտա,// Համա տուն չի գա» և նման բազմաթիվ տարբերակներ»[65]: Ինչպես տեսնում ենք, խաղողի որթի բուսածագման առասպելը ևս կապվում է կենդանու մարմնի (ազդրոսկր) մասերի հետ[66]: Մորթված կենդանու մասերի հավաքումն ու ամբողջականացումը (կենդանացում) և օրհնումը նույնական է զոհաբերության վաղնջական ծեսի իմաստաբանությանը, երբ արարողապետը զոհի կտրտված, բաժանված մասերը (քառսի, խառնակության խորհրդանիշ) հավաքելով ի մի է բերում և ամբողջացնում (տիեզերքի մասերի կամ տարրերի համախմբման, միավորման, կազմակերպման խորհրդանիշ): Առասպելաբանական մակարդակում հավաքված մասերով վերակենդանացած հորթը, ինչպես նաև նրա մարմնի մասից բուսած որթատունկը խորհրդանշում են վերանորոգված ու վերածնված տիեզերքը[67]:

Քննվող հեքիաթի չորս փոփոխակներում՝ «Ոսկեմազիկ»[68], «Վարդիկ եզան հեքիաթ»[69], «Կարմիր կովի խեքեաթ»[70] և «Թանջյուման խաթուն»[71] հեքիաթներում, որբերը մորթված կովի (եզան) ոսկորները գոմում հորելուց հետո խորթ մոր կողմից հանձնարարություն են ստանում՝ հավաքել գետնին թափած աղանձը, թասում ժողովել սեփական արցունքները և կամ այնքան լացել, որ ամանի մեջ լցված կորեկը արցունքով ծածկվի. «Էնքան պըտի լաք, որ ձեր աչքի արցունքը էս կօրեկին ծածկա»[72] (հմմտ. Իսիս և Նեփտիս քույրերի ջերմեռանդորեն թափած արցունքի շնորհիվ Օսիրիսի՝ տասներկու կտոր արված և աշխարհի տարբեր կողմեր նետված մարմնամասերի հավաքման և վերականգնման ծեսի հետ): Օսիրիսի հետ սկսեց հարատևել նաև նրան ձոնված սուրբ կենդանիների՝ եզների պաշտամունքը, իսկ քույրերի հոգեհանգստյան լացը «հետագայում դարձավ մեռածների համար եգիպտական բոլոր ողբերի նախատիպը»[73]:

Յունգյան հոգեվերլուծական դպրոցի մեկնությամբ՝ արցունքը նվիրագործման ծեսի սկիզբն է և, հրաշապատում հեքիաթում վերածվելով գետի, դառնում է ժամանակային յուրօրինակ քրոնոտոպ ցուցիչ: «Չար պառավը»[74] հեքիաթում. «Ախչիգյը ընգիս ա ծմկնեն, լանց ինելանվ շոռ կյաս, վեր հացը ճարի: Շատ վեր լանց ա ինիս, ըրտսուքները մին կյետ ա տռնայս ըսկսիս քյնանը»[75]: Մաքս Լյութիի կարծիքով հրաշապատում հեքիաթի հերոսի աղեկտուր լացը ոչ թե վկայություն է հերոսի ծանր հոգեվիճակի մասին, այլ այնկողմնային

---

[65] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, № 248 ա-ժե, էջ 25-26:*

[66] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 264-265:*

[67] *Նույն տեղում, էջ 266:*

[68] *ՀԺՀ, հ. VIII, էջ 387-393:*

[69] *Նույն տեղում, էջ 72-77:*

[70] *ԵԼՄ, էջ 252-257:*

[71] *ՀԺՀ, հ. XIV, էջ 194-205:*

[72] *ԵԼՄ, էջ 255:*

[73] *Ջ. Ֆ ր ե զ ե ր. Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, 1989, էջ 430:*

[74] *ՀԺՀ, հ. V, Երևան, 1966, էջ 615-616:*

[75] *Նույն տեղում, էջ 616:*

աշխարհից օգնություն ստանալու միակ հնարավոր ճանապարհն է[76]: Տոտեմ կենդանին ի զորու կլինի հովանավորել հալածված որբերին, եթե վերջիններս հավաքելով ի մի բերեն մորթված կովի (եզան) ոսկորները, վերաստեղծեն նրա մարմնի ամբողջականությունը, որպեսզի հոգին վերադառնա իր ամբողջական և անխաթար մարմնի մեջ և կարողանա նոր կյանք ստեղծել (հարություն առնել) այնկողմնային աշխարհում: Գրիգոր Լուսավորիչը Տրդատ թագավորի գանակոծումներին ի պատասխան մատնացույց է անում հարություն առած Քրիստոսին, «քանզի իր կամքովը մեռավ ու մտավ գերեզման և նա է պահում բոլոր մարդկանց ոսկորները»[77]:

Այդ պաշտամունքն աղերսվում է վաղնջական առասպելաբանական մտածողության հետ, ըստ որի՝ ոսկորներն իրենց մեջ կրում են կենդանի արարածների ոգին, և դրանց խնամքով ժողովելն ու հորելը ընկալվում է իբրև մարդու և տիեզերքի հնարավոր վերածննդի նախապայման: Այդ պատկերացումները մեր ժողովրդի բանահյուսական մշակույթում կենցաղավարում են «Օսկոռ օր էղնի, միս ու մորթի կը բրռնի» բանաձևային իմաստնությամբ: Վերոհիշյալ հավատալիքի խոր հնության մասին են վկայում նաև հայոց մեջ կենցաղավարող բուժաղոթքները. «Միսը մսին դրի, / Ջիլը ջլին դրի, / Ոսկորն ոսկորին դրի» կամ «Միսը մսին, պոզը պոզին»[78]:

Սափորը արտասուքով լցնելու և ննջեցյալի գերեզմանի մեջ զետեղելու սովորությունը բնորոշ է նաև հին հայերի թաղման ծեսին[79]: Այդ մասին են վկայում նաև մատենագրական տեղեկությունները. «Զաման լալոյ արտասուացն»[80]: XIX–XX դդ. հուղարկավորության ծեսերում անգամ շարունակում է կենցաղավարել հանգուցյալի՝ ապրողներին ուղղված առատ արցունք թափելու հորդորպատվիրանը[81], որը համադրվում է մաքրագործվելու միջոցով կարեկցության արժանանալու և հանգուցյալի մարմնին (տվյալ դեպքում՝ կովի ոսկորներին) կենդանություն պարգևելու հավատալիքին: Հենց այդ նպատակին է միտված հին եգիպտացիների՝ հանգուցյալի մարմինը մումիայի վերածելու, անգամ արձանի, քանդակի, պատկերի ձևով սարկոֆագի մեջ կամ դամբարանում պահելու ձգտումը[82], որպեսզի մումիայի վնասվելու դեպքում (որը աղետալի կլիներ նրա հոգու հետագա ճակատագրի համար) հոգին կարողանար վերադառնալ մումիային փոխարինող արձանի կամ քանդակի մեջ և «գտներ իր նախկին

---

[76] M. L u t h i. The European Folktale: Form and Nature (trans. John Di Niles). (Das europäische Volksmärchur. Formand Wesen, 1947). Bloomington and Indianapolis, 1986, p. 14.

[77] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթագրություններով՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977, էջ 43:*

[78] *Հայ հմայական և ժողովրդական աղոթքները, աշխատասիրությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, 2006, էջ 107:*

[79] *Վ. Բ ղ ո յ ա ն. Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 176:*

[80] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմություն հայոց, էջ 59:*

[81] *Ե. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական սգո երգեր.– ՀԱԲ, հ. 24, Երևան, 2007, էջ 158:*

[82] *Կյումոն եղբայրները Հայաստանում գտել են ցուլերի բազմաթիվ գլուխներ, ինչպես նաև ցուլի ամբողջական արձաններ, որոնք այժմ պահվում են Բրիտանական թանգարանում (Կ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 98):*

մարմինը անվնաս և ամբողջական»[83]*: «Հին Եգիպտոսում Իսիսը պատկերվում էր նստած, գլխին թագ՝ կովի եղջյուրներով, որոնց մեջտեղը՝ արեգակի սկավառակը: Շատ հաճախ Իսիսը պատկերվում էր իր որդուն՝ մանուկ Հորոսին գրկած»*[84] *(Հիսուս Քրիստոսին գրկած Աստվածածնի նախատիպը, հմմտ. որբ երեխաներին հովանավորող տոտեմ կովի հետ):*

Ինչպես տեսնում ենք, մարդկության պատմությանը հայտնի առաջին հզոր արքետիպերը՝ կապված այնկողմնային գիտակցության հետ (խոսքը հին եգիպտական «Մեռյալների գրքի» մասին է), շփման եզրեր են գտել քրիստոնեության, հատկապես Նոր Կտակարանի Հայտնության հետ, և ներթափանցել են ժողովրդական բանավոր ավանդության, մասնավորապես՝ հրաշապատում հեքիաթների մեջ:

Հայկական հեքիաթներում արցունք թափելու ծեսի մնացուկները, ըստ էության, կապվում են կովի ոսկորները միացնելու, ամբողջացնելու պատկերացման հետ: «Թա̈նգյուման խաթուն»[85] *հեքիաթում. «Ախչիկն ի, կով մորթելու գյախ կընա̈ցի փըռքյըրվի վեր մըսրին, կուլա̈, կմըռմըռա: Էսա կով որ կմորթեն կպըռծնեն, ախչիկն ի, կառնի կաշին, ուր մոր ոսկըռներն էլ բիթ̈ն գյաղտիկ կժողվի, կլըցի մեչ էտա կաշուն, կփա̈թըթի, կտանի փա̈գյախ կովու մըսրի տակ կփորի, կխորի»*[86]*: Բայց քանի որ խորթ մայրը տոգորված չէ կովին կենդանի տեսնելու ցանկությամբ, աղջիկը որքան էլ որ մղկտալով լացում է, ամանը մնում է դատարկ: Չմոռանանք, որ այս հեքիաթում մորթված կովն ի սկզբանե խորթ աղջկա մայրն էր*[87]*: Այստեղ մեկտեղվել են տոտեմ կենդանու և սնուցող մոր՝ կենսաբանորեն հավասարունակ գործառույթները և դրանից բխող պաշտամունքը*[88]*. «Թա̈նգյուման ի, կէլնի կբաշլայի կորեկ ժողովել: Մեյ դեխեն էլ աչկեր պըռնի վեր թա̈շտին, ընքյուռ-ընքյուռ կուլա̈ կմըղկըտա: Աման նա̈ թա̈շտի տակ առցունքյ կէրևա, նա̈ էլ գյետնի կորկի վերեն բա̈լու կանի ուր ժողովել»*[89]*:*

Ժամանակի ընթացքում հեքիաթային պատումի կրած փոփոխությունների համատեքստում տաշտը (սափորը, լալամանը) արցունքով լցնելու պահանջը պառավի խորհրդով իրականացվում է արցունքին փոխարինած աղաջրով, և

---

[83] *Հ. Է ղ ո յ ա ն. Աստվածների ժամանակը. Հին եգիպտական պոեզիա, Երևան, 2007, էջ 22:*

[84] МНМ, т. 1, с. 568–570; *Դիցաբանական բառարան, էջ 103-104:*

[85] *ՀԺՀ, հ. XIV, էջ 194-205:*

[86] *Նույն տեղում, էջ 199:*

[87] *Հին հնդիկների մոտ բնության արգասավորողի արձանը պատրաստվում էր կնոջ կամ կովի տեսքով (Ջ. Ֆ ր ե զ ե ր. նշվ. աշխ., էջ 238):*

[88] *Հետագայում տոտեմ նախնիների պաշտամունքին փոխարինում է «սուրբ համարված անձնավորությունների ոսկորների նկատմամբ ծայրահեղ հարգանքը» (Վ. Բ դ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 178): Հայոց Վասակ զորավարը գերությունից ազատում է մեր Արշակունի թագավորների ոսկորները, որոնց փառքը, բախտն ու քաջությունը ոսկորների միջոցով Շապուհը փոխադրել էր Պարսկաստան և պատվիրում է դրանք թաղել Այրարատ գավառի Աղձք գյուղում, որը գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում. հմմտ. սարկոֆագի մեջ կամ դամբարանում մումիան անվնաս պահելու ծեսի հետ (Փ ա ւ ս տ ո ս ի Բ ի ւ զ ա ն դ ա ց ւ ո յ Պատմութիւն հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 224-225):*

[89] *ՀԺՀ, հ. XIV, էջ 200:*

այն ավելի շատ ընկալվում է իբրև աղջկան փորձության ենթարկելու, քան հոգեհանգստյան ծես, մանավանդ որ դրան հաջորդում է արարողական մոր՝ պառավի միջնորդությամբ որբ աղջկա ամուսնությունը արքայազնի հետ:

Ուշագրավ է, որ Անահիտ դիցուհու՝ իբրև մայր աստվածուհու պաշտամունքն աղերսվել է եզան, կովի և ցուլի պաշտամունքների հետ: Անահիտի սրբազան նախատիպ հանդիսացող երինջների արձակ նախիրը ազատ ճարակում էր նրան նվիրված մեհյանների շուրջը: Կյումոն եղբայրների «Պոնտական ուսումնասիրութիւնք» աշխատության մեջ Անահիտի վերաբերյալ հիշատակություններում նրան տրվում էր ցլապահ մակդիրը[90]:

Հեքիաթներում կենդանիների գույնի ընտրությունը թաղված է տոտեմական հավատալիքների ընդերքում. «Զոհաբերվող կենդանիների՝ ավանդաբար սահմանված գույները հաճախ համապատասխանում էին այս կամ այն աստվածության կամ ոգու բնույթին»[91]:

Քննվող հեքիաթներից երեքում տոտեմ կենդանու (կով, եզ) գույնը չի նշվում[92]: «Պոլոտ կեով»[93] և «Վարդիկ եզան հեքիաթները»[94] համարժեք են կովերին տրված անուններին, միայն մի տարբերությամբ, որ եթե պոլոտ նշանակում է պոչատ, և կովը անվանադրվել է իր ֆիզիկական հատկանիշի նմանությամբ, ապա երկրորդ հեքիաթում Վարդիկ անունը միաժամանակ ենթադրում է վարդի գույն, իսկ հնում վարդի գույնը ավելի շատ ընդունված է եղել համարել կարմիրը: «Բոր եզը»[95] հեքիաթում եզի գույնը բոր է, այսինքն՝ մուգ դարչնագույն, որը бурый բառի բարբառային, աղավաղված ձևն է[96], և որը դարձյալ աղերսվում է կարմիրին: Մնացած երեք տարբերակներում[97] կովը կամ եզը կարմիր գույն ունեն:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2679 ձեռագրում պահպանվել է մի հետաքրքիր հիշատակություն՝ Անահիտին նվիրված կապույտ երինջների մասին. «Տրդատ յառաջին ամի ետ նուերս Անահտա Կապուտակ երինջ ի գեղն Երիզա»[98], իսկ «Խաթուն տիրամոր վանքում պահվում էին «տիրամոր» նշանով, այսինքն՝ ճակատին սպիտակ խալ ունեցող եզներ և կովեր»[99]: Հին Հունաստանում Հերա աստվածուհու համար զոհաբերում էին ջահել, սպիտակ, իսկ Պեր-

---

[90] *Կ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 94-100: Հայոց մեջ ցայսօր կենցաղավարում է եզան գանգն ու եղջյուրները առատության ակնկալիքով տան ճակատից կախելու սովորությունը:*

[91] З. С о к о л о в а. Культ животных в религиях. М., 1972, с. 195.

[92] *ՀԺՀ, հ. III, էջ 435-441, հ. VI, էջ 46-49, հ. VIII, էջ 387-393:*

[93] *ԲԱ, FA IV, 0145-0160:*

[94] *ՀԺՀ, հ. VIII, էջ 72-77:*

[95] *ՀԺՀ, հ. XIII, էջ 161-177:*

[96] *Ասացող Մարտիրոս Գևորգյանը՝ ծնված Մշո դաշտի Սալբկան գյուղում, երկար տարիներ պանդխտել է, ապրել Քղիում, Էրզրումում, Ղարսում, Թիֆլիսում, որտեղ էլ 1916 թ. պատմել է սույն հեքիաթը: Գրի է առել Արտաշես Բարսեղյանը (տե՛ս նույն տեղում, էջ 500):*

[97] *ՀԺՀ, հ. XII, էջ 524-539, հ. XIV, էջ 194-205, ԵԼՄ, էջ 252-257:*

[98] *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դարերի, հ. 2, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 10:*

[99] *Կ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 100:*

սեփոնեի համար՝ սև կովեր[100]: Երկրագործական տոների ժամանակ մորդվերը սկզբում զոհաբերում էին մուգ դարչնագույն (бурый), հետո՝ կարմիր, իսկ վերջում՝ խայտաբղետ եզներ[101]: Չինաստանում զոհաբերվող կենդանին պետք է լիներ «մաքուր», այսինքն՝ միագույն, առանց որևէ նշանի: «Նախապատվությունը տրվում էր երեք գույների՝ սպիտակ (արևաթույր – солнечная масть), սև (հյուսիսի գույնը – цвет севера), շիկակարմիր կամ մուգ կարմիր (հարավի գույնը – цвет юга) «[102]: Հայ ժողովրդական հեքիաթներում, այնուամենայնիվ, գերակշռում է կովի կամ եզան կարմիր, այսինքն՝ հարավային գույնը:

Հավատքի ստորին աստիճանում արգելվում էր տոտեմ կենդանու մսի ճաշակումը[103]: Մեզ հետաքրքրող դիպաշարերում կովակերպ նախամայրը (տրբ.՝ պառավը) հովանավորյալ որբերին տեղեկացնում է այդ տաբուի մասին: Միայն երկու տարբերակում՝ «Կարմիր կովի խեքեաթում»[104] և «Ոոլոտ կեռվում»[105], կովի միսը անհամ կամ լեղի է չար կնոջ և իր աղջիկների համար, իսկ մեղրի պես քաղցր է որբերի համար: Այս հակադրությունը, որ մասնակիորեն է արգելում տոտեմի մարմնի ճաշակումը, հեքիաթի դիպաշարում հանգուցալուծվում է որբերին սատարելու իմաստաբանությամբ, իսկ կրոնաառասպելաբանական պատկերացումներում՝ բարու և չարի, կյանքի և մահվան ընկալումների հակադրամիասնությամբ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հայ ժողովրդական հեքիաթներում առկա կովակերպ նախնու պաշտամունքի համաձայն՝ կարմիր կովի եղջյուրները որբ մնացած երեխաների համար մայրական ստինքների դեր են կատարում կամ օգնում են խորթ մոր կողմից հանիրավի հալածված հերոսներին, որպեսզի նրանք հայտնվեն առատության մեջ:

Երբեմնի տոտեմ կենդանիների հետ կապված ժողովրդական պատկերացումները՝ բարեկեցության, չափազանց առատորեն թափվել-լցվելու մասին, ցայսօր պահպանվել են «առատության եղջյուր» դարձվածքում:

---

[100] З. С о к о л о в а. *Նշվ. աշխ., էջ 194:*

[101] *Նույն տեղում, էջ 194-195:*

[102] *Նույն տեղում:*

[103] *Նույն տեում, էջ 7: Հնդկաստանում ցայսօր կենցաղավարում է սրբազան կենդանիների, ինչպես նաև կովերի պաշտամունքը, որոնք ազատ շրջում են փողոցներում, և ոչ ոք չի համարձակվում նրանց մորթել ու միսն օգտագործել սննդի մեջ (նույն տեղում):*

[104] *ԵԼՄ, էջ 254:*

[105] *ԲՍ, FA IV, 0145-0160:*

МОТИВ КРАСНОЙ КОРОВЫ
В АРМЯНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ

ТАМАР АЙРАПЕТЯН

Р е з ю м е

В армянском народном фольклоре, и в частности, в волшебных сказках присутствует культ красной коровы. Согласно данному культу, втайне от мачехи дети-сироты зарывали рога, ноги, копыта коровы и, присосавшись к ее рогам, насыщались. Так, несправедливо наказанные со стороны мачехи дети-сироты оказались в благополучии. Это верование взаимосвязано с архаическим религиозно-мифологическим мышлением. На основании этого культа кости в себе носят дух живых существ и сбор полностью всех костей воспринимался как предусловие возможного возрождения человека и космоса.

THE MOTIVE OF RED COW
IN ARMENIAN FAIRY-TALES

TAMAR HAYRAPETYAN

S u m m a r y

There is a cult of cow-looking ancestor in Armenian national folk-lore and, particularly, in the fairy-tales. According to that cult the horns of red cow became maternal breast for orphans who had unfairly been persued by stepmother, so they appeared in the prosperity. This cult is closely connected with ancient religious-mythological thinking. According to that cult the bones carry the spirit of living beings. The collection and burying of all these bones are interpreted as a precondition of possible rebirth of the man and the space.